

ՈՒՇԱԳՐԱՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Մ. ՄԵԾԱՐԵՆՑԻ ՄԱՍԻՆ

Միսաք Մեծաբենցն արևմտահայ պոեզիայի անդաստանը մտավ այնպիսի ժամանակաշրջանում, երբ ամբողջ ուժով դեռ շարունակվում էր մոլեզնեկ համիդյան բռնապետությունը, իր երկաթե կապանքներում խեղդելով օսմանահպատատակ ազգերի գրականությունն ու մշակույթը: Բավական է թեկուզ թերթել այն ժամանակվա թուրքահայ մամուլը, համոզվելու համար, որ վերջիններս կամ զբաղվում էին անտեղի ու ձանձրալի վեճերով իրականության հետ ոչ մի առնչություն չունեցող հարցերի մասին, կամ համարներ շարունակ բարձրագույն ռեկլամ էին անում առևտրական զանազան ֆիրմաների արտադրանքները (կարի մեքենա, կանացի կոշիկ, դիմահարդարման քսուք և այլն): Առանձին էջեր էին հատկացվում նշանդրեքի, ամուսնության, «երկու ամուլներու» հարսանեկան ճամփորդության մանրամասն նկարագրություններին և այլն: Տասնյակ համարներ շարունակ տպագրվում էին եվրոպական գրականության այնպիսի ստեղծագործություններ, որոնք անարժեք էին հայտարարված հենց իրենց՝ եվրոպացիների կողմից: 1907-0908 թթ. «Մասիսն» ու «Բյուզանդիոնը», օրինակ, պարբերաբար հրատարակեցին «Արցունք խմող կինը» (106 համարում), «Խարտյաշ մազը» (125 համարում), «Վայրագ կինը» (120 համարում), «Կրքի զոհերը» (139 համարում) և այլն:

Ժամանակակից իրականություն չպատկերելու, նրանից խույս տալու այս ձգտումը հասկանալի կդառնա, եթե հիշենք, որ այդ բնույթի ամեն քայլը համարվում էր հանցագործություն, ժողովրդի կյանքին անդրադառնալը, կամ ժողովրդի կյանքից թեմաներ վերցնելը՝ պետական դավաճանություն: Այդպիսի «պետական դավաճանության» մեջ մեղադրվեց ու աքսորվեց Պոլսի «Բյուզանդիոնի» խմբագիրը, որովհետև համարձակվել էր իր թերթի ճակատին «Հայագիտական» տերմինը դրոշմել, դատապարտվեց «Արևելք» թերթը, որովհետև հոդվածներից մեկն ավարտվում էր բազմակետով, որը խստիվ արգելված էր: Հայոց լեզվից հիմնավորապես արտաքսվել էին «ազգ, ազգային, հայրենիք, Հայաստան, աստղ, ազատություն, պայքարել, ապստամբ» և բազում այլ բառեր, որոնց փոխարեն համապատասխանաբար պետք էր գործածել «համայնք, տոհմային, բնակավայր, երկիր, լուսավոր (կամ լուսատու), ինքնիշխանություն, դիմադրել, անհնազանդ» և սրանց նման «համագործերը»: Եթե սրան ավելացնենք, որ ասպարեզից վտարված էր H₂O բանաձևը, որովհետև կարող էր կարդացվել Համիդ երկրորդը հավասար է գրոյի, «Մեծ քիթ» բառակապակցությունը, քանի որ կարող էր ակնարկ լինել սուլթան Համիդի հասցեին, որը մեծ քիթ ուներ, բառարաններից անխտրաբար

հանվել էր «համիլյե» բառը, որը արաբերեն նշանակում է ավանակ, սաստկագույնս արգելված էր գործածել «աստղն ընկավ» կամ «աստղը խավարեց» և նման այլ արտահայտություններ, որովհետև «օգոստափառ սուլթանը» ապրում էր «Աստղի պալատում» (թուրքերեն՝ Յալդըզ քյոշկ) և ուրեմն դա էլ կարող էր ակնարկ դիտվել և այլն, ապա կարելի կլինի համաձայնել ժամանակակից քննադատի դիպուկ արտահայտության հետ, որ այդ տարիներին եղածը «Գրականություն մը էր, որուն՝ ուրիշ բառ պակսելուն, գրականություն կոչումը տված էինք»:

Ահա այս պայմաններում էր, որ 1907 թ. գարնանը հրատարակվեց 21-ամյա Մեծարենցի երախայրիքը՝ «Ծիածան» վերնագրով:

Վերլուծել Մեծարենցի պոեզիան առանց ժամանակաշրջանի համառոտ բնութագրությունը տալու, կնշանակի ընկնել մեծամեծ սխալների մեջ, և այս տեսակետից հասկանալի է դառնում այն առանձնահատուկ ուշադրությունը, որը դարձրել է Էդ. Ջրբաշյանը վերոհիշյալ հարցին: Առանց էության մեջ խորամուխ լինելու, քննադատները հաճախ են մեղադրել Մեծարենցին, թե ինչու նրա առաջին ժողովածուում բացակայում է, ասենք, հայրենասիրության մոտիվը՝ «Հայրենի ավերակներու գովքը», «Նախահարց սրբազան հիշատակները», կամ թե ինչու հեղինակը ձգտում է «միշտ դեպի տխուրը, դեպի ամպամածը»: Իրեն հատուկ սեղմ, բայց սպառնիչ վերլուծությամբ՝ տալով ժամանակաշրջանի գիտական բնութագրությունը, ընկ. Ջրբաշյանը հստակորեն ցույց է տվել, որ Մեծարենցը չէր կարող իր հայրենիքին անդրադառնալ կամ նրա ողբերգությունը պատկերել այն ահավոր ռեժիմի պատճառով, որի մասին խոսվեց վերևում, հետևաբար քննադատների այդ մեղադրանքը մնում է օղից կախված: Սրան սերտորեն միանում էր Մեծարենցի հիվանդագին վիճակը, թոքերում ավերածություններ գործող հյուծախտը, որը «Ծիածանի» լույս աշխարհ գալուց ընդամենը մեկ տարի հետո, 1908 թ. հուլիսի 3-ին, քսաներկու տարեկան երիտասարդին գերեզման տարավ (տես՝ «Մանգունեի էֆքյար», 1908 թ., №№ 2157-60, տրված է մահվան ու թաղման գիտական մեծ արժեք ներկայացնող նկարագրությունը. հոդվածը դժբախտաբար վրիպել է գրախոսվող գրքի հեղինակի ուշադրությունից): Այստեղից էլ՝ Մեծարենցի պոեզիայի մյուս առանձնահատկությունը՝ թախիծը, վիշտը, անպատասխան սերը: Ծայրահեղորեն նուրբ է հեղինակի զգայական աշխարհը, քնքույշ ու նրբակառույց, լի հույզերով ու հուսահատություններով, որոնումներով ու խափանումներով, և Էդ. Ջրբաշյանը կարողացել է հաջողությամբ բացահայտել այդ հանգամանքը: «Կարդալով այդ գործերը, մենք ասես ոտք ենք դնում արտակարգ նուրբ, ինքնատիպ հույզերի ու ապրումների, իդևերի և

հուսալիսաբությունների, առատ ու անկաշառ սիրո մի աշխարհ: Մեծարենցի պոեզիան մարդկային և բնության գեղեցկությունների խոր ընկալման և հաստատման պոեզիա է» (էջ 34), գրում է հեղինակը և այդ կարծիքի հետ չի կարելի չհամաձայնվել:

Հինգ տարվա ստեղծագործական կյանք է ունեցել մեր դասականը՝ կյանքի վերջում հրատարակելով իր երկրորդ ժողովածուն՝ «Նոր տաղեր» խորագրով: Եվ Մեծարենցի բանաստեղծական ամբողջ ուղին, բառացիորեն սկզբից մինչև վերջ, ուղեկցվել է գրական-բանասիրական այնպիսի հախուռն ու կրքոտ վեճերով, որի նմանը հազվադեպ է մեր գրականության պատմության մեջ, ըստ որում հայտնվել են միայն դրական կամ միայն բացասական կարծիքներ: «Ծիածանի» հանդես գալուն պես, «Հանդես ամսօրյան» (1907 թ., № 9) գրեց. «Մեծարենց կցուցնե նուրբ ճաշակ, ազնիվ ու փափուկ զգացում, խորհելու բնական և սիրուն կարգ մը: Կը բաղձանք շուտով տեսնել հաջորդ նույնպիսի հատորիկներ – կը հանձնենք ամեն հայ գեղարվեստի սիրահարներու, որ զայն ունենան իրենց գրադարանին մեջ»: Գրեթե նույն ժամանակ Պոլսում հրատարակվող «Մասիս» օրաթերթում կարդում ենք (1907 թ., № 47). «Առանց երկմտության և վարանողական դեգերումներու՝ պետք է ըսել, թե բանաստեղծությունը, զոր կփորձե Մեծարենց և որուն փողհարությանն է նվիրվեր ոգևի՛ն, անհմաստ և զառանցական ճիգ մըն է, ապարդյուն ոգորում մը, որ անհմաստ ու արժեք չունի»:

Նույնպիսի աղմուկ և տարակարծություններ ստեղծեց Մեծարենցի հաջորդ գիրքը՝ «Նոր տաղերը», ըստ որում, ինչպես նախորդ դեպքում, գրական այդ բանավեճերին մասնակցում էր նաև ինքը՝ հեղինակը: Այն ժամանակ, երբ «Բազմավեպը» (1908 թ., № 2) դրական ու ոգևորիչ գրախոսական տպագրեց այդ գրքույկի մասին, արձանագրելով հեղինակի աճը, նրա «գրիչին ամրանալն ու առնանալը», որպես բանաստեղծ հասունանալը, «Մասիսում» (1907 թ., № 47) հրատարակվում է ըստ ամենայնի բացասական մի հոդված, որտեղ հեղինակը բառեր չի խնայում գրքույկը ժխտելու համար: ««Նոր տաղերու» ընթերցումը, – գրված է այնտեղ, – չի տպավորվեր ու չազդեր: Խոշոր պարապ մը կա հոն, անհուն դատարկ կը, որ շոշափելի, կայուն, հաստատ ոչինչ կը ցուցնե իր բավիղներուն մեջ թափառողին: Թեթև սարսուռներ, տարտամ զգացություններ, թափանցիկ երևույթներ, աղոտ ֆուսֆորափայլութենե մը ծնած, որուն մեջ կը շրջագային, կը գալարվին, կը ծխան և ուրիշ ոչինչ... Ամբողջ գիրքին մեջ ոչ մեկ էջ, որ տպավորե, որ ազդե, որ ցնցե, որ խորհրդածել տա»: Ինչպես հաճախ է պատահում, ընդդեմ տրամադրված քննադատները անդրադարձան նաև Մեծարենց-անհատին, «ուսումնասիրության» առարկա

դարձրեցին նրա կյանքի այլևայլ դրվագները և հասան մինչև «Միսաք Մեծարենց» անվանումը բավականին անսրամիտ գտնված «Մի սագ մեծամիտ» ձևով վերափոխելուն:

Նման վկայակոչումներ կարելի է մի քանիսն էլ բերել, որից ակնհայտ է դառնում, որ լուրջ աշխատանք ու բանասիրական ունակություններ էր պահանջվում էդ. Ջրբաշյանից, Մեծարենցի պոեզիայի գնահատման ասպարեզում սխալների մեջ չընկնելու և այդ պոեզիան ըստ արժանվոյն գնահատելու ու ներկայացնելու համար: Այս էլ ավելացնենք, որ բանավիճող կողմերից յուրաքանչյուրը մեջ էր բերում մի շարք փաստեր ու վկայակոչումներ իր ասածն ապացուցելու համար: Եվ գոհունակությամբ պիտի նշել, որ գրախոսվող գրքի հեղինակը կարողացել է գտնել հարցի լուծման ճիշտ ուղին՝ նշել է այն ամենը, ինչ դրական է Մեծարենցի բանաստեղծությունների ժողովածուներում և քննադատել է բացասականը:

«Միսաք Մեծարենց» ուսումնասիրության մեջ հաջողված են նաև վերջին երկու գլուխները, որտեղ հեղինակը քննելով սիմվոլիզմի և Մեծարենցի պոեզիայի մի քանի հիմնական հարցերը, առաջարկում է միանգամայն ինքնուրույն լուծումներ: Հայտնի է, որ դեռ իր գրական գործունեության սկզբից Մեծարենցը մեղադրվել է նրանում, որ կուրորեն, առանց դրա համար սոցիալական անհրաժեշտ պայմանների, հայ գրականության մեջ է տեղափոխել եվրոպական սիմվոլիզմի ազդեցությունը, որ նա սոսկ և միայն «ծիծաղելի կապկոդ է» և այլն: Մյուս կողմը, ընդհակառակը, մերժում է նման մեղադրանքը, նշելով երիտասարդ բանաստեղծի ինքնուրույնությունը, նրա գեղարվեստական ստեղծագործության՝ մյուսներից տարբերվող բնույթը, և այլն: «Երբ մենք համադրում ենք Մեծարենցի ստեղծագործությունը սիմվոլիստական տեսության և գեղարվեստական պրակտիկայի հետ, – այդ առիթով գրում է էդ. Ջրբաշյանը, – ապա չի կարելի չնկատել, որ մի քանի շատ էական կետերում նրա պոեզիան ոչ միայն բաժանվում, այլև որոշակիորեն հակադրվում է սիմվոլիզմի սկզբունքներին»: Հետագա շարադրանքի ընթացքում բացահայտելով իր տեսակետը, հեղինակը ցույց է տալիս, որ ի հակադրություն սիմվոլիստների, որոնք հանդես էին գալիս անհատապաշտական քարոզներով, Մեծարենցի մոտ վճռականորեն գերիշխում է հումանիզմը, մարդուն ու մարդկանց որևէ կերպ օգտակար լինելու ձգտումը: Ի հակադրություն սիմվոլիստների, որոնք խույս էին տալիս իրականությունից, ստեղծագործության աղբյուր համարում էին բանաստեղծի եսը, Մեծարենցը ձգտում է դեպի կյանքը, դեպի իրականության ճշմարտացի պատկերումը: Չնայած անողորմ հիվանդությանը, մահվան մոտալուտ մերձավորության զգացմանը, Մեծարենցը միչև վերջ էլ չխոնարհվեց մահվան առաջ, չներբողեց մահը, ինչ այնքան բնորոշ է սիմվոլիստներին:

Իհարկե, ինչպես ճիշտ նշում է ուսումնասիրության հեղինակը, բացարձակապես ժխտել Մեծարենցի կապը սիմվոլիզմի հետ, անհնար է: Պոլսի հայ միջավայրը և թուրքական պետության սանձազերծած բռնակալական հալածանքները այն հետևանքն ունեցան, որ Մեծարենցի որոշ գործերում իրենց զգացնել են տալիս սիմվոլիզմի գեղագիտությունից ու գրական այդ ուղղության պոետիկայից եկող ոչ քիչ թվով հնարանքներ: Բայց դրանք ամեննին էլ չեն նսեմացնում Մեծարենց-բանաստեղծի գրական ժառանգության անուրանալի արժեքը:

Էդ. Ջրբաշյանի ուսումնասիրության մասին ասված բոլոր դրականով հանդերձ, ցանկության կարգով կնշեինք հետևյալը: Լավ կլիներ, որ գրքույկի վերջում տրված լիներ Մեծարենցին վերաբերվող՝ ինչպես մինչև այժմ հրատարակված հոդվածների, այնպես էլ պարբերականներում տպագրված նրա ստեղծագործությունների հնարավորին չափ լիակատար ցանկը: Այդպիսի մի փորձ մեր օրերում եղել է: 1934 թ. հրատարակված Մեծարենցի «Երկերի լիակատար ժողովածուի» վերջում կազմողները (Վ. Ալազան և Վ. Նորենց) «Մատենագիտություն» խորագրի ներքո գետեղել են վերոհիշյալ նյութի մի ցանկ (ի դեպ՝ բազում բացթողումներով ու սխալներով), որը, սակայն, չգիտես ինչու, 1956 թվականի վերահրատարակության մեջ դուրս է թողնված: Իսկ որ նման մատենագիտական ցանկի կարիքը մեծապես զգում է գրախոսվող աշխատությունից օգտվող ընթերցողը, աներկբայելի է: Ցանկալի կլինի, որ հիշյալ դիտողությունն ի նկատի ունենան Մեծարենցով զբաղվող մեր մյուս ընկերները նույնպես, իրենց հետագա աշխատանքների ժամանակ:

Որպես դրական երևույթ պետք է արձանագրել, որ վերջին ժամանակներս սկսել է զգալի ուշադրություն դարձվել արևմտահայ գրականությանը: Աստիճանաբար հրատարակվել են գրեթե բոլոր նշանավոր հեղինակները (Մ. Մեծարենց, Դ. Վարուժան, Գր. Զոհրապ, Վ. Թեքեյան, Ռ. Սևակ, Եր. Օտյան և այլն), իրենց օրինական հերթին են սպասում Զիֆթե-Սարաֆը, Սիպիլը, Չեոկյուրյանը, Ինտրան, Մալեգյանը և ուրիշները: Ժամանակն է հանդես գալ գիտական լրջմիտ ուսումնասիրություններով ինչպես արդեն հրատարակված, այնպես էլ «հերթի սպասող» արևմտահայ մեր մյուս դասական հեղինակների մասին, և Էդ. Ջրբաշյանի «Միսաք Մեծարենցը» առաջին խրախուսելի քայլերից մեկն է այդ կապակցությամբ: